տոյ գրուած է սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, ՃԻ, Հ, Ա, և Ա, որոնք օրինակելով՝ աւելացրի շարականներիս տակ։

Այս շարականները արտագրուած են ամենայն ճշտութեամբ և անփոփոխ. աւելորդ չի լինիլ ասել, որ այս Շարակնոցի մէջ տպուած է և սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ Օրհնութիւնը, որն արդէն մուծուած է Ձայնագրեալ Շարակնոցի մէջ։

Սահակ վրդ. Բաղդասարեանց։

22 Մարտի 1897 թ.
Նուխի։

Նուխուոյ յաջորդի Արժ. Բաղդասարեան Սահակ վարդապետի ձեռք բերած այս բոլոր շարականները ունենք և մենք Անձանօթ Շարականք վերնագրով մեր անտիպ Ժողովածուի մէջ, որոնք քաղել ենք Մայր Աթոռիս Մատենադարանի բոլոր ձեռագիր Շարականներից։ Եւ որպէս զի յիշեալ Արժ. Հօր ուղարկած շարականների տպագրութիւնը կատարեալ լինի, ուստի մենք մեր կողմից աւելորդ չհամարեցինք բաղդատել այդ բոլորը մեր ձեռքում գտնուած օրինակների հետ, յիշելով միանգամայն, թէ ի՞նչ համար կրող ձեռագիր Շարականների մէջ են գտնուում նոքա։ Արդ՝ ստորև գրուած շարականներից՝ սրբոյն Թադէոսի Այսօր ցնծան խրախճանապէս Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, ՄԺ-ի, Ո-ի, Ց-ի, Մկ-ի և Ճշ-ի հետ գտնուում են 1587—ԺԶ, 1594—ԻԳ, 1612—ԼԱ, 1622—ԺԱ, 594—ԿԴ և 599—ԿԹ (կրճատ գրութեամբ) Շարականների մէջ։ Օրհնութիւնը գտնուում է և 1581—Ժ (կրճատ գրութեամբ) Շարականում, իսկ Մկ—ը և Ճշուն՝ և 1613—ԼԲ Շարականի մէջ։

Սոյն շարականներին յաջորդող սրբոյն Գէորգայ զօրավարի Քաջամարտիկ սուրբ նահատակ (որ պակասում է իւր կարգից) Օրհնութեան հետ շղթայուած Գովեալ զնոցից Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, Ց-ի և Մկ-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ. իսկ Հզաւոր եւ յաղթող գողտրիկ մի անձանօթ շարականը, որ ինձ թուում է թէ ճաշու լինի, և ի լրումն այս կարգի, աւելացրինք մենք, սա էլ գտնուում է 1588—ԺԷ Սարգիս երէցի Շարականի մէջ, և գրուած է քաջայաղթ զօրավարիս Ով սուրբ Գէորգ ծանօթ Մկ-ի տակ։ Ի գիտութիւն մեր ընթերցողներին յայտնում ենք վաւերական Մանկունքիս մասին և այս, որ տպագրուած Շարականների մէջ այս Մանկունքը գրուած է ԺԵ Մարտիրոսաց կարգում, որին թերևս շատերը անգիտութեամբ վերագրեն Մարտիրոսաց կարգը գրող Պետրոս գետադարձին, մինչդեռ այս փոփոխութիւնը Մանկունքիս հետ նոր է, և Մանկունքիս նորութեան մասին վկայում է յիշեալ Սարգիս երէցը իւր Շարականի հետ գրած Ցօնացուցում՝ ասելով, «Եր. Ցաւն սրբոյն Գէորգեայ զաւրավարի. Հցն. զկ. Զինուորութիւնք հրեշտակ. մկ. նոր ասա. և թէ ոչ. Զինաւորն Քրիստոսի. (Մարտիրոսաց ԺԵ. Դ.) Մեհեկի. ԻԳ.»։ Ի նշան Մանկունքիս նորութեան գրուած է նաբաց ձևով։

Այս շարականներին յաջորդող սրբոյն Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց Անարկելոյն Աստուած անձանելի մի այլ Օրհնութիւնը իւր լծորդ Հց-ի, Ո-ի, և Ց-ի հետ գտնուում են միմիայն 594—ԿԴ Շարականի մէջ։

Երջանկայիշատակ Գէորգ կաթուղիկոսը ի նկատի ունենալով, որ մեծ առաքեալներս իրենց տօների ժամանակ չունին երգուելիք մի յատուկ շարական, այս իսկ պատճառաւ 1875 թուին յիշեալ շարականները մուծեց Ձայնագրեալ Շարականի մէջ, ինքն իրենից սաեղծելով նոցա ձայնը և ձայնագրել տալով։

Արդ՝ թողնելով Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց անունով յօրինուած այս վերջին Օրհնութիւնը, Հց-ը, Ող-ն, և Ց-ը, որոց մասին չգիտեմ թէ ո՞ր դարու գործ են և մեր եկեղեցու ո՞ր սրբազան պաշտօնեայն է, հոգւով ոգեշրել, գառնանք այժմ Ցէր Պօղոսեանց բարեկրօն Սիմէոն քահանայի՝ իւր գերապատիւ յաջորդին ներկայացրած «հին և եղծեալ» Շարականին, «որ է գրեալ ի թուին Հայոց 608 (ՈԸ—1159) և որի մէջ պարունակում են «երկոքին շարականքս այսոքիկ»՝ այսինքն, «սուրբ առաքե-

լոյն Թադէոսի» Այսօր ցնծան խրախճանապէս իւր լծորդ շարականներով, «և սրբոյն Գէորգեայ» Դովեալ վերոյ իւր լծորդ շարականներով։ Ուղիղ է արդեօք հին և եղծեալ Շարականիս այս սիրա թրթռացնող 608 հայոց թուականը, ուղիղ է արդեօք, որ նրա մէջ պարունակուած «երկոքին շարականները» են արդարև ԺԲ-րդ արձաթ դարի գործ։

Այս տարակուսանքը մեր մտքից վերացնելու համար, իբրև վկայ և ապացոյց հանդիսանում մեզ նոյն իսկ այդ շարականները։ Սրբոյն Գէորգայ Օրհնութեան, Հարցի, Ողորմեայի և Ցերեկեցի իրարից անբաժան տների գլխատառերը մեզ կարդալ են տալիս—«Գ ր ի գ ո ր ի ո ս ի Ա ռ գ է ո ո ր գ է ո ս վկայ»։ Ո՞վ է արդեօք Հայոց ՈԸ և փրկչական 1159 թուին կամ լաւ ևս ասել ԺԲ-րդ դարում ապրող այս Գ ր ի գ ո ր ի ո ս ը—այս Գրիգորիոսին ևս ճանաչում եմ՝ սրբոց վկայաբանութեանց և նոյն իսկ սրբոց սիրահար «փոքր վկայասէր» կոչուած Գրիգորիոս կաթուղիկոսին, որը իւր ծերութեան օրհնութիւնը բոլոր ուժով թափելով իւր հեղաշամբոյր եղբօր՝ Ներսէս Շնորհալու գաղթի վերայ, և իւր ամբիծ ձեռքով օծելով նրան կաթուղիկոս, ապա «Փոխեցաւ յաստեացս յամի տեառն 1166 և ի թուականութեանս Հայոց ՈԺԵ կամ ՈԺԴ և թաղեցաւ ի Հռոմկլայ»։ (Զամչ. Պատ. հար. Գ. 82)։ որ ասել է թէ վերոյիշեալ հին և եղծեալ շարականի տարեթուից յետոյ զլրուելով այլ ևս 7 տարի, ապա կնքել է իւր մահկանացուն երջանիկ հայրապետս, յիշատակ թողնելով մեզ «Գրիգորիոսի առ Գէորգէոս վկայ» շարականը։

Դալով Թադէոսի առաքելոյ շարականներին, որոնք ինչպէս տեսանք գտնուում են դարձեալ նոյն հին և եղծեալ Շարականի մէջ, ԺԳ-րդ դարում երևոյ՝ 1588—ԺԷ նշանաւոր Շարականի գրիչ Սարգիս երէցը ասում է մեծ առաքելոյս ծոնի ժամանակ երգուելիք շարականների մասին՝ իւր Ցօնացուցումն առանց մէջ տեղ բերելու Բարդուղիմէոս առաքեալի անունը։ «Շր. Թադէոսի առաք. հարցն զնոյն ասա. թէ ոչ. Լակից բանդ հօր և հոգ՝. Մեծացու (սցէն) հոգոյն դալստե. Այսաւրը նոր ժող. ի քաղոց ԺԳ. թզ. 225 ա։

Արդ՝ Սարգիս երէցի այս ակնարկութիւնը ո՞ր նոր Հարցի մասին է, Որ արարիչդ ես հրեղինաց առաջին Հարցի՞, որ գրուած է Այսօր ցնծան խրախճանապէս Օրհնութեան տակ, ուր և սկզբից մինչև վերջ «Թադէոս» է միայն յիշատակուում, գրուատելով նրա առաքելութիւնը Նախախնամողի դիմաց՝ ասելով, «Սուրբ զառաքեալն Թադէոս առաքեցեր ի Հայաստան լուսաւորիչ որդւոց թորգոմայ», թէ Որ իսկզբանէ սահմանելով երկրորդ Հարցի, որ գրուած է Անսկիզբն Ա՛ծ անճառելի Օրհնութեան տակ, ուր Հարցիս շնորհալի հեղինակը առաքելութեան աստիճանի մէջ հաւասար ճանաչելով զԹադէոս և զԲարդուղիմէոս, սկզբից մինչև վերջ գովում է մերթ մէկին մերթ միւսին, մթմնջալով երկուսի համար ևս Միածին Որդւոյ և Հոգւոյն սրբոյ դիմաց, «Որ...լուսաւորիչ Հայաստան երկրիս՝ պարգևեցեր զսուրբ առաքեալն Բարդուղիմէոս», «Որ...առաքեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալն Թադէոս», ելն ևն։ Արդ՝ այս պարզ և ակնայտնի նշաններից յետոյ, Սարգիս երէցի յիշած նոր Հարցը, փոքր վկայասէր Գրիգորիոս կաթուղիկոսին տարով ու դարով հասակակից՝ է առաջին Հարցը՝ «Որ արարիչդ ես հրեղինաց», որ գտնուում է յիշեալ հին և եղծեալ Շարականի մէջ և յատնախապէս արտադրուած է ժամանակի հին գրիչներից՝ ինչպէս տեսանք, և ոչ երկրորդ Հարցը՝ Որ իսկզբանէ սահմանելով՝ որ իբրև աւելի նոր բան, յատնախապէս չէ արտադրուած և հետևապէս չէ եղել նոյն հին և եղծեալ Շարականի մէջ։

Ո՛հ, որքան տարակուսանքներ կլուծէր այդ հին և եղծեալ և ՈԸ թուին գրած աննման Շարականը, եթէ մի օր յարութիւն առնէր մեր շէն և անշէն սրբավայրերից։ *

Սահակ վարդապետ Ամատունի։

---

* Ստորև դրուած շարականների ծանօթութեանց համար գործ են դրուած ձեռագրների հայերէն թուականները — ԺԶ. եւն. հին եւ եղծեալ Շարականի փոխարէն՝ Տպ. (տպագրեալ)։ իսկ Ձայնագրեալ շարականի՝ Ձնգ։

«Այսօր ցընծան[1] խրախճանապէս եկեղեցիք Հայաստանեայց և պարէ ուրախութեամբ, համաձայնեալ ընդ[2] հրաբուն զօրացըն. ասնելով ըզյիշատակ առաքելոյն Թադէոսի. վասն որոյ մաղթանօք սորա կեցո ըզմեզ մարդասէր Փրկիչ։

«Այսօր զընտրեալն յաշակերտաց[3] և ի[4] խըմբից վարդապետաց սուրբ զառաքեալըն Թադէոս առաքեցեր ի Հայաստան լուսաւորիչ արդուց Թորգոմայ. վս։

«Այսօր ծընեալ որդիք լուսոյ մաքուր երկամբք աւազանին, ի ձեռըն սուրբ հօտապետին, մեծ և ընտրեալ առաքելոյն լուսապայծառ քարոզութեամբ. վս։

«Այսօր կոչեաց զազգըս Հայոց նախահըրաւէր կոչմամբ Հոգւոյն ի հարսնութիւն սուրբ փեսայիդ.[5] մուծանելով ի յառագաստ[6] ընդ բազմելոցն անդրանկաց Հոգւոց.[7] վս։

«Այսօր խընդա մայր Աստուծոյ տաճար բանին[8] մարմնացելոյ. յիշատակաւ հօրըն լուսոյ. և աղաչեա զլոյսն ի հօրէ. որ վառեցաւ մարմնով ի քուս[9] յարգանդի[10]. զի փրկեսցէ զանձինըս մեր։

✠ «Այսօր ժողովք նահապետաց[11]. և երջանիկ դասք արդարոց համախմբեալք[12] սիրով ընդ մեզ, հրճուին[13] ասնիս վրկայութեամբ առաքելոյն Թադէոսի. վս։

«Այսօր վկայն հանդիսաւոր վառեալ զինու տիգաւ խաչին եմուտ յատեան խրախուսելով և սատակեաց զչար ախոյեանն[14] որպէս և դու կենսաբեր[15] փայտիւն. վս։

«Այսօր զգեղարդըն պատուական եա մեզ նշան պահպանութեան՝ ներկեալ արեամբ կենարարին. որով փրկիմք և ամրանամք յորոգայթից[16] կրկին որսողաց. վս։

«Այսօր ծածկեալ[17] զանձըն լուսոյ մաքուր նշխարք երանելոյն վերացօղ[18] ըզցօղ շնորհաց, ի մաքրութիւն հոգւոց մերոց, և ի բուժումն ախտալից մարմնոց.[19] վս։

«Այսօր և դու կոյս Մարիամ Աբրահամեան տոհմին զարծանք. ի փրկութեան մերոյ խորհուրդ. առցես ընդ քեզ միջնորդ կենաց, սուրբ զառաքեալըն Թադէոս. և հայցեսցես ի Տեառնէ զթողութիւն մերոց[20] յանցանաց։

Դ։ Հ. Որ արարիչդ ես հրեղինաց. և ըստեղծիչ հողեղինաց, սուրբ զառաքեալըն Թադէոս նախկին ի փառըս կոչեցեր. ըզքեզ բարերարեմք Աստ հարցըն մերոց։

Որ էակիցդ ես հօր փառաց. հոգւոյն[1] հաղորդ որդիդ գթած. զչարչարանաց[2] քոց հաղորդեալն ամենակիր քեզ[3] արարեր. ըզ։

Որ զուգափառ հօր և որդւոյ. հոգիդ բրխումբն և[4] համադոյ. առատապէս շնորհօք լցեր[5]. զձիւնափայլեալն[6] որ ի Սաղիմ. ըզ։

Գ. Ըզծէր։ Ընդ առաքելոյն Թադէոսի[7]. զառաքեալն ի հօրէ բարձր արարէք ընդա յաւիտեան։

Այսօր ըղմաքրեալն[8] յորովայնէ. զհոգւով օծեալըն Թադէոս զոր առաքեաց[9] լուսաւորիչ Հայոց. օրհնեցէք զառաքիչ[10] որդւոյ ըզհայրըն. բարձր։

Այսօր աշակերտք աւետարանին. որ ի ձեռըն Թադէոսի. զաւետիս կենաց հընչեաց որդւոցս[11] Արամայ. ծընունդք[12] լուսափայլ

---

1. Ոգ. ծա—ցնծայ.
2. Զեռագիրք չունին—ընդ.
3. Ոգ.—ընտրեալ աշակերտաց.
4. Կդ. չունի—ի.
5. Ժզ, Խա, ծա, Կդ, Տպ.—փեսային.
6. Տպ.—ի յառագաստըն.
7. ծա—անդրանկանց հոգւոյն.
8. Ոգ—բանին տեառն սերմնաքելոյ.
9. Ոգ. Խա. ծա. Կդ. Կթ, Ժ. Տպ—ի քոյդ.
10. Ժզ. Խա, ծա. Կդ, Կթ, Ժ—յարգանդէ, Տպ.—արգանդէ.
11. Տպ.—Նահապետացն.
12. Ժզ, Խա, ծա, Կդ, Կթ. Ժ, Տպ—համախմբեալ. ծա—համաձայնեալ.
13. Ժզ, Խա—հրճուիմք.
14. Տպ.—ախոյեան.
15. Ոգ.—կենսատու խաչիւ. ծա.—կենսաբեր փայտին.
16. Ժզ. Խա—յորոգայթէ.
17. Ժզ—զծածկեալ.
18. Ոգ—վերացուղէր.
19. Ժզ, Ոգ—մարմնոյ.
20. Ժզ, Ոգ, Խա, Կդ, Տպ—մերոյ.
1. Ժզ, Խա—որդի անեղ հոգւոյն հաղորդ. Ոգ, ծա—որդիդ անեղ հոգւոյ։
2. Ժզ, ծա—չարչարանաց.
3. ծա, չունի—քեզ. Տպ.—քոց.
4. Ոգ. Խա ծա, Հդ, Տպ. չունի—եւ.
5. Ժզ, Խա—լցեալ.
6. Ժզ, Խա—ձիւնափայլն.
7. Զեռագիրք չունին—Թադէոսի.
8. Ժզ մաքրեալ. 9. Տպ.—առաքեցեր.
10. Ժզ—զարարիչն. Ժզ. Ոգ, Խա, ծա, Կթ Տպ. զառաքիչն.
11. Ժզ. Խա, ծա որդւոց 12. Ժզ ծնունդ.

բանին[13] նորին բարձր արարիչ զՈրդին Միածին։

Այսօր սպասաւորք երկնաւոր հացին. որ զոգ հացն անմահութեան ի ձեռն Թադէոսի[14] բաշխեաց որդւոց հոգևորաց. օծեալ հոգւով քահանայք բարձր արարիչ զհոգին ճշմարիտ։

ՀԵ. Աստուածածին բանին բարձօղ. քառակերպից աթոռոց[1] եղեր վեհագոյն. որով զրաղմեալն ի քերովբէս[2] ի քեզ կրեցեր. զքեզ բարեբանեմք սրբրասաց ձայնիւ և հոգևոր երգով մեծացուցանեմք։

Սափոր ոսկի կենաց հացին. և տախտակ քարեղէն մատամբ բանին ձեռագրեալ[3] որով զօրէնս անեղծ եառուր մարդկան. զքեզ։

Մաղթեա զոգնեալն ի քէն Յիսուս. մաքրութիւն[4] տալ հոգւոց յաւուր ածնի ընտրեալ զաւակի քո առաքելոյն Թադէոսի. զքեզ։

ՈՒ. ԱԿ. Որ զբերութեամբ արարչական կամաց քոց Տէր ողորմեցար որդւոցս[1] Աբգարայ. և եառուր պաշտպան փրկութեան[2] մեզ զՔՂԷԷՍ որ կոչեցաւն ի քէն Թադէոս. մաղթանօք սորա ողորմեա։

Որ ընտրեցեր անօրէնութեանդ քում քարոզ զսուրբն[3] Թադէոս. և առաքեցեր աւետարանիչ հիւսիսոյ ազանց ներգործութեամբ շնորհաց սուրբ հոգւոյն. մաղ։

Որ զերջանիկ և զգերապայծառ լոյս[4] իմաստութեան նրմա շնորհեցեր. և զսխրամած խաւար մեզաց և անգիտութեան[5] յարարածոց նովաւ հերքեցեր. մաղ։

Պ. Որ միշտ յերկինս փառաբանիս ի հրեշտակաց անթարգման բնութիւն[1] այսօր[2] ի ձեռն երանելի առաքելոյն ընկալար օրհնաբանիչ

13. Խա, Ծա, Նդ, ԿԹ, Տպ. — բանիւ.
14. Իգ — իձեռն առաքելոյն բաշխեաց

1. Ժզ, Խա, Ծա — աթոռոցն.
2. Իգ — ի քերովբէս.
3. Իգ — ձեւագրեաց.
4. Իգ — մաքրութեան.
1. Խա, Ծա, Նդ — որդւոց.
2. Իգ — ի փրկութեան.
3. Իգ, Տպ. — զմնծն.
4. Ծա — լոյսդ.
5. Խա — զանգիտութեան. Տպ. — անգիտութեանն.
1. Խա, Ծա — բնութեամբ.
2. Ժզ ի ձեռն Թադէոսի սուրբ առաքելոյն.

չէս[3] ի հողեղինացս. վասնորոյ երգեմք զքո փառս ի բարձունս։

Որ անձառ աստուածային փառաւ շքեղացուցեր զԱդամն առաջին[4]. այսօր վերբսային զաղգս Հայոց զարդարեցեր պէսպէս շնորհաց քոց նորոգութեամբ. վայ։

Որ ի ձեռն Մովսէսի զՀին Իսրայէլ յԵգիպտոսէ ազատեցեր[5] այսօր ի ձեռն Թադէոսի սուրբ[6] առաքելոյն. զաղգս Հայոց յոչդէպութիւն վերակոչեցեր. վայ։

Դ. ԱԼ. Անժամանակ ծընունդ որդի միշտ յԵութեան ընդ հօր զոլով անձառապէս. որ[1] ընտրեցեր քեզ պաշտօնեայ սուրբ զառաքելոյն Թադէոս ստանալ[2] նովաւ[3] հաղորդ փառաց զորդիս Թորգոմեայ ժառանգելով ըզկեանս անվախճան։

Լոյս ի լուսոյ առաքեցար. լուսաւորել[4] ըզխաւարեալ մեզաք բնութիւնս. և[5] յարփիւռոր լուսոյդ ջահ վառեցեր ըզԹադէոս. լուսաւորել բանիւ զորդիս Թորգոմայ. ժառ։

Ողկոյզ ծաղկեալ[6] հրաշիւք հոգւոյն. որ ճրմլեցար ի քառաթև[7] հընձան խաչին. և արբուցեր հրեղէն զինեաւ զկրանելին ըզԹադէոս. որով զմայլեալ[8] անձառապէս արբոյց զորդիս Թորգոմայ[9] ժառանգելով զկեանս անվախճան։

Ճշ. Ճրշմարտութեան բանին քարոզ և առաքեալ սուրբդ[1] Թադէոս. որ զկենարար սերմն հողեւոր սերմանեցեր յերկիր բանաւոր. բարեխօսեա առ Տէր վասն անձանց մերոց։

Որ յօրինակ քաղցրահամ վարդապետութեանդ զոր մեզ[2] արբեցուցեր. Ջուր կեն-

3. Ժզ — աւրինաբանիչ ի հրեղինաց. Իգ — աւրինաբանիչ.
4. Իգ — առաջի.
5. Իգ — ազատելով.
6. Իգ — Խա. Ծա. չունին — սուրբ.
1. Ժզ. Խա որ ընտրեցեր ի մարդկանէ. քեզ
2. Ժզ — ստանալով.
3. Իգ. Խա, Ծա, Նդ. ԿԹ, Խբ. Տպ. — սովաւ.
4. Իգ — լուսաւորելս մեզաք բնութեամբ. որ արփիւռոյլ.
5. Իգ, Խա, Ծա, Նդ. ԿԹ, Խբ, Տպ. — որ
6. Իգ — եղելոյ զծաղկեալ.
7. Նդ. Տպ. — ի քառանկիւն.
8. Տպ — զմայլեալն.
9. Տպ. չունէր — Թորգոմայ. ժառանգելով զկեանս անվախճան. 1. Իգ — սուրբն. 2. Տպ. — մեր.

զանի երկոտասան վրատկ բաժանեալ յապաառաժ վիմն բղխեցեր. բա։

Ի տաճարի հանդիսատեան վկայութեան քո սուրբ ոսկերաց. մատուցեալ երկիւղիւ միշտ և հանապազ պաղատիմք առ հայրըդ զբեռն. բարեխօսեա։

Կանոն որոյն Դէորգայ զօրավարին.

ա։

Դ։ Գովեալ զընդիցդ[1] զինուորաց. երկնաւորաց ի յերկրի զօրաց. Դէորգէոս[2] Քրիստոսի յաղթող զօրավար. ընդ բոլոր հնարից թշնամւոյն մարտեար։

Ոտեալ երկաթ զմարմին քո զինաթ. զերկիր բնութեամբդ՝ արօրեցեր տանջանաթ. Դէորգէոս երկրագործող անձին ըստ[3] անուն ընդ քրտանց հեղեր ըղկայլակս արեան։

Ի կիզանուա[4] բնութիւն հրոյ յաղթեալ. և ցաւելի մարմնով ընդդէմ սրոյ մարտեար. պարտող զտանջանս և զՇնամտոյն[5] խսպառ զօրութիւն. մեզ Դէորգէոս հայցեա զփրկութիւն։

Դէորգէոս Փրկչին խաչակից. փառաց յարութեան այսօր տօնակից. զառհաւատչեայ թագակցելոյն աստէն ընկալեալ. մաղթեա վասն մեր զինուոր զօրացեալ։

Որ յԵրի[6] առեր հարիւրապատիկ. մշակութեան ծաղիկ ըղհրաշս առ մարդիկ. վաստակդ անձին պըտղաբերել՝ զանմահ կեանս յերկրին. միշտ Դէորգէոս մաղթեա փրկողին։

Որ դաւանեալ ի նահատակաց. բերկրեալ յարութեամբ որդւոյդ մայր փառաց. հայցեա վասն մեր միշտ կոյս տիրուհի. առ քեզ մաղթանաթ Դէորգէոսի։

Բամից դասուց քոց վկայից զԴէորգէոս[7] զօրագլուխ խրմբից. ցուցեր խաչիդ քո չարչարակից. և յարութեան քո կենակից հաղորդ փառաց թագեալ[8] տօնակից. բաղմագոյն սորա չարչարանաթ տէր կեցո ըզմեզ։

Ի տիպ կողի քո զեղարդեան[9] զխոցուածն ի կոգն առեալ զեղարդեամբ. հոգւով զհոգիս չարութեան պարտէր. մարմին զերկաթ[10] յետս ընկրկէր և քերանաց մինչ ի յոսկերս Դէորգէոս կախեալ ժուժկալէր. բաղ։

Որ ըստ քոյին Յիսուս թագման յերիս[11] աւուրս իգուր կրոյն ժուժալը այրման[12]. երեքօրեայ ընդ քեզ յարուցեալ. իրր ի լուսեաց ի զբոյն ելեալ Դէորգէոս անսպի նորոգեալ. բաղ։

Սարսուռ յանւոյն տանջանս[13] կապեալ և հոլովմամբ սրովքըն խոցոտեալ. որպէս այգի յօդահատելով. պըտղաբերէր քեզ հազարօք և քարոզէր զքեզ մեռելովքըն յարուցելով. բաղ։

Ի յերկրեղէն մեր բնութենէ մշակութեամբ սրբրեալ կոյս առ ի հօրէ. ժամու եւուր[14] մեզ պըտուղ զորդին՝ յորմէ վրկայք բողբոջեցին զորս մշակեաց[15] Դէորգէոս զօրագլուխ նոցին. տիրուհի հայցմամբ նորա առ քեզ մաղթեա վասն մեր։

Գ։ Ա։ Անմարմնոց[1] արքայ հրեշտակաց զինուորութենանց պաշտեալ. նահատակեալ քոց զինուորաց յերկրի զօրավար զԴէորգէոս[2] ցուցեր. ըզ քեզ օրհնէ Աստուած հարցըն մերոց։

Ոտամկական գումարք թագաւորք և պետութիւնք զիւաց. պատերազմեալք ընդ մի զինուորըն քո տանջանաքն ամենն յաղթեաց. ըզ։

Դէորգէոսի զինուորին քո յաղթող քաջութեամբ. ընդ քեզ բերկրեալ ըսքանչացան հրեշտակք պսակօք ընդառաջեալք յերկնից. ըզ։

Զ։ Զգաւէր օրհնեցէք բարձր արարէք ըզնա յաւիտեան։

Ելին բանի ջեռեալ հրով սիրոյ. Դէորգէոս զինուն հաւատոյ յաղթեաց սրոյ և հրոյ. բաղ։

---

1. Տպ. - գնդի
2. „ — Դէորգէս
3. „ — ընդ.
4. „ — ի կիզանոտ.
5. Ձեռագր. — Թշնամտոյն.
6. „ „ — աշխարհի.
7. „ „ — Դէորգէոս.
8. Տպ. — Թաղեալ.
9. Ձեռագր. — գեղարդեամբ.
10. „ „ — յերկաթ.
11. Տպ. — երիս.
12. Տպ. — այման.
13. Ձեռագր. — տանջան.
14. Տպ. — երտուր.
15. Ձեռագր. չունի — զորս մշակեաց.
1. Տպ. - անմարմնոցդ.
2. Ձեռագ. - Դէորգէոս.

Որ ըստ անուան զհոգւոց երկիր մշակեաց։ [3] ըզկռոց փուշ հերքեաց և զվիկայս ծաղկեաց։ բար։

Որ զօրութեամբ զանթիւ հրաշս եցոյց։ զհնագոյն մեռեալսն յարոյց զմահապերն եւոյծ։ բար։

Որ ի յերկրի։ զինուորէր կարգաւ։ մահուամբ յերկինս թագեցաւ անմահ պրսակաւ։ բար։

Դ։ ա։ Բամեալ ըզկիրս [3] ասանջանաց զերկուանս հանուրդ քո վրշաաց Դէորգէոս յանձին տարաւ։ իբրև ըզվէմ անդիծ զրաւ։ զքո լուծ և զնաչ Քրիստոս բարձեալ սաղ ծանրագոյն [6] վիմաց պարզեալ։

Դամրաց առ կայսր ուռ տարածեալ զմոյսն* ծածկեաց յորդւոյդ ծաղկեալ սրօքն այտեալ և կոշկոճեալ։ քաջ բարուեակ հօր քո սրբրեալ։ Դէորգէոս քեզ մշակեաց բազում վրկայս պրտղաբերեաց։

Է ի հոգւոյդ քո բնակարան յայանեալ գործօքն հրաշազան ի ասանջանաց միշտ նորոգեր և զվէրս ախտից բազմաց մաքրէր։ Դէորգէոս ընդ քեզ յառնէր։ և ըզ մեռեալս [7] յարուցանէր։

Ոգւովն ի փորձն [8] ոչ յաղթելով։ մարմնովն ի կրիցն ոչ պարտելով։ [9] երեր զպատկեր քո յարութեան։ որ հաղորդեալ տէր քո մահուան։ Դէորգէոս մեծ քո վկայն։ որով տուր մեզ ձիր մաքրութեան։ [10]

Պ։ Ուքանչելապէս ի քեզ Քրիստոս։ [1] յաղթեաց բանսարկուին։ միշտ քեւ բարեարէ զձիր մարդկան ազին։ ով սուրբ Դէորգէոս։ պատեալ զօրազլուխ պարուց վրկայից։ աղաչեա վասն մեր Քրիստոսի ընդ քեզ հանդիպիլ։

Վառեալ սուսերաւ բանի հոգւոյն արութեամբ։ զյուսոյ սաղաւարտ և զհաւատոյ վահան զրեցար քաջութեամբ։ ով սուրբ։

Կապեալ Քրիստոսի ճշնշեցար բանտից նեղութեամբ։ յոտին կոխեցեր զոճն երկաթի հրացեալ կոշկաց բեռամբ։ ով սուրբ Դէորգ։

Անրիծ կենաց սրբարգործութեամբ զՔրիստոս ըզգեցար։ և զերրնաւից տանջանաց ժուժեալ մահու ըզխաչքն բարձեր։ ով սուրբ Դէորգէոս։ փառք և պարծանաց պրսակ վրկայից։ քաջ զինուորդ և յաղթող առ արքայն Քրիստոս լեր մաղթող։

Ցերջանկացեալ մարտիրոս հօրէ՝ մարտիրոս որդի՝։ սքանչելի ծընունդ սրբոյ վկային Դէրանդէոսի։ [2] ով սուրբ Դէորգէոս դամրացուց բողբոջ և պաղեստու ծաղիկ։ Նիկոմիդայ [3] պրսակ։ ընդ քեզ միշտ երգեմք փառս [4] ի բարձունս։

Դ։ գ։ Որ թագաւորդ երկնաւորաց յերկրէ ստացար գունդ զինուորաց։ որպէս արեգակն ի մէջ աստեղաց փայլեաց հաղորդ խաչիդ փառաց Դէորգէոս յաղթօղն ի դամրաց։ աղաչանօք սորա Քրիստոս խընայեա ի մեզ։

Որ ասանջանօքն բազմագին քո վկայիցն ետուր պրսակ շնորհին։ զմեծ [1] և [2] զզրժընդակ կիրս յամենայնի՝ [3] Դէորգէոս տարեալ յանձին՝ զչարչարանաց քոյին զպակասութիւն ելից [4] ի մարմին։ աղա։

Որ զինուք զանձն որպէս երկիր [5] մշակելով զանուանն էարկ ի կիր՝։ ծաղկեաց յաշխարհի հարիւրապատիկ պրտղաբերել։ ասա և յերկրին՝ զօրծով հրաշից բազմապատիկ Դէորգէոս շնորհիւ առ մարդիկ։ աղաչա։

Որ քրիստնաջան երկագործեաց և զօրագլուխս երկուս [6] զօրօք քեզ ընծայեաց։ զանատօլէս և ըզպրատօլէս ընդ թագուհւոյն աղեքսանդրեայ։ նոյն զաթանաս և զԴղերիկայ [7] բազում սրբրօք մատոյց վրկայս քեզ Դէորգէոս։ աղաչա։

3։ Տպ։—Դէորգէոս զկռոց փուշ։
4։ Զոգր։—ի յերկրէ։
5։ „ „—ի գիրկս։
6։ „ „—ծանրագոյն ստոր վիմաց։
* Զոգրմ եւ Տպգումմ՝ այսպէս։
7։ Զայնգր—եւ զմեռալսն։
8։ Տպ։—որ գովի փորձն։
9։ Զոգր։—պատրելով։
10։ Տպ։—քաւութեան։
1։ Զոգր։ չունի։—քրիստոս։

2։ Զայնգր։—Գերոնգէոսի։
3։ „ —Նիկոմիդեայ։
4։ „ —փառք ի բարձունս աստուծոյ։
1։ „ —մեծ։
2։ Տպ։ չունի—եւ։
3։ Զոգր։—ամենայնի։
4։ „ —ելիցն։
5։ „ —յերկնից։ Տպ։—երկից։
6։ Տպ։—երկու։
7։ „ —Դղերիկայ։

✻ Դ. [1] Հզաւ և յաղթող նահատակք քրիստոսի, բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

Վերին զաւրացն դասակիցք, զինաւորք երկնաւոր թագաւորին, բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

Անթառամ ծաղիկ սրբոց, և պարծանք սուրբ եկեղեցւոյ, յոյս վառանգելոց ի նեղութեան. բարեբանեմք զձեզ ով սուրբ մարտիրոսք, բարեխաւսք հաւատացելոց առ Քրիստոս:

ահ.

Դ. Ի. ✻ Անբսկիզբն Աստուած անճառելի լոյս համասփիւռ. ծագեցեր սղորմութեամբ զլոյս աստուածային քո գիտութեան[1] ի Հայաստանս:[2]

Միածին որդի լոյս ի լուսոյ ծագեալ յաշխարհ կոչեցեր զՀայաստանս[3] ի հաւատս անրիծս ի ձեռն սուրբ առաքելոցն:

Անբսպառ ապրիւր կենդանարար բղխումն անճառ. լցուցեր զՀայաստանս բարեբար Փրկիչ և կեցուցիչ քո գիտութեամբ:

✻ Արդ եկայք հաւատացեալ[5] ժողովուրդք Հայաստանեայց՝ ի ձեռն սուրբ առաքելոցն Բարդուղիմէի՝ տուք օրհնութիւն հօր ի բարձունս:

Ժողովուրդք աշակերտեալք առաքելոյն Թադէոսի՝ եկեալք ի լոյս ի խաւարէ. բարեբանեցէք զմարմնացեալ բանն Աստուած:

Նորոգեալք ի հնութենէ ի ձեռն սուրբ առաքելոցն՝ զնորոգող բնութեան մերոյ ի ձայն գոհութեան ամենեքեան փառաւորեցէք:

Դ. Հ. Որ ի սկզբանէ, սահմանելով զգիրկութիւն Հայաստանեայց՝ Հայր անբսկիզբն և ամենագութ՝ մեզ ծանուցեր զմիածինդ ի ձեռն սուրբ առաքելոցն. աղաչանօք սոցա ներեա մեզ տէր Աստուած հարցն մերոց:

Որ ի կուսական որովայնէ, ծընաւ մարմնով բանդ Աստուած ի փրկութիւն որդւոցս[1] ադամայ՝ առաքեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալն Թադէոս. աղաչանօք:

Որ նորոգեցեր զբոլոր հոգիս անեղ հօր Լակից. լուսաւորիչ Հայաստան երկրիս[2] պարգևեցեր զսուրբ առաքեալն Բարդուղիմէոս. աղաչանօք:

Դ. Օրհնեցէք ամենայն գործք տեառն զբոլոր օրհնեցէք՝ բարձր արարէք զնա յաւիտեան:

Որք զարդարեցայք երկնային լուսով ժողովուրդք Հայաստանեայց՝ բարեբանելով զբոլոր օրհնեցէք բարձր արա:

Որք[3] ի ձեռն սրբոյն Թադէոսի ընկալայք զբրդկրութիւն հօրն երկնաւորի՝ զամբ օրհնեցէք:

Որք տեսիք զլոյս Աստուածդիտութեան ի ձեռն Բարդուղիմեայ սուրբ առաքելոյն. զբոլոր:

Դ. Ա. Որ անքննին քո գթութեամբ[1] իջեր յերկնից բանդ Աստուած՝ և փրկեցեր զբոլոր եղերս ի ձեռն սուրբ առաքելոցն. ողորմեա ի քեզ հաւատացելոցս:

Որ զթագաւորն Արզար Հայոց՝ բժշկեցեր ի չար ախտէն՝ ի ձեռն սուրբ և[2] երջանիկ առաքելոյն Թադէոսի. ողորմ:

Որ զբոլաւար կառապաշտութեան փարատեցեր յերկրէս Հայոց և ծանուցեր զքեզ բանիւ սուրբ առաքելոյն Բարդուղիմեայ՝. ողորմ:

Դ. Գ. Որ շնորհեցեր Հայաստանեայց զսուրբ առաքեալն Թադէոս և ծանուցեր զքո միածինդ՝ ներօղ գթած հայր երկնաւոր. օրհնեմք զքեզ անլռելի ձայնիւ:

Որ յայտնեցեր մեզ զՀայր քո անեղակից [1]բանդ Աստուած՝ ի ձեռն սուրբ և երջանիկ առաքելոյն Բարդուղիմեայ՝. օրհ:

Որ մաքրեցեր զբոլոր ի դիցապաշտ մոլորութեանց՝ և արարեր երկրորդապուս հօր և որդւոյ և քեզ հոգւոյդ օրհ:

---

1. Թերեւս — մշ.
1. Զ. եւ Զնգլ. — գիտութեանդ.
2. „ — ի Հայաստան.
3. „ — զՀայաստանեայս.
4. „ — գիտութեամբդ.
5. Տպ. եւ Զնգլ. — լուսաւորեալք ժողովուրդք.

1. Զնգլ. — որդւոց.
2. „ — երկրի.
3. „ — որ.
1. Տպ. — գթութեամբդ.
2. Զ. եւ Զնգլ. չունին — եւ.
1. Տպ. — հօր բանդ Աստուած.